

**425. Տապանաքար, որի արձանագրությունը մեղ չի հասել և տրվում է Ն. Բերյողինի ռուսերեն թարգմանությամբ.**

"ЭТА МОГИЛА ВЛОГОЧЕСТИВАГО И СОСТРАДАТЕЛЬНАГО БАРОНА ОШИНА, СЫНА АНДОНІОСА ОСЕФА-ВЫ, КОТОРЫЕ ЧИТАЕТЕ [СІЕ], ПОМОЛИТЕСЬ ОБЪ ОТПУЩЕНИИ ГРЕХОВ ЕГО. В 784 ГОДА "<sup>1</sup>.

**1882 թ. Ա. Վիսոցկին հայկական եկեղեցու («Հունական պալատ») չուրջ հայանարերում է երկու արձանագրություններ, որոնք հրաշարակում է Ք. Պատկանյանի ռուսերեն թարգմանությամբ<sup>2</sup>: Դրանք են.**

**426. Տապանաքար՝ վրան 6 առղ.**

ԱՅՍ ՀԱՆԳ/ԻՍՏ ՊԱՐՈՒ / ԵԽՂՈՒԹԻՒՆ [ՄԵՂԱՑ] ՔԱ.ԻՒՈՒԹԻՒՆ / ԱՌ ՅԱՒՈՒՐ/ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ:

Հրատ. Հո. Զանիոլադյան, 217:

**427. Տապանաքար՝ վրան 3 առղ.**

ԱՅՍ Է ՀԱՆԳ/ԻՍՏ ՅՈՂՍԵՓԻ / ԹՐՎԻՆ էծնէ (1318):

Հրատ. Հո. Զանիոլադյան, 218:

**428. Տապանաքար՝ վրան 5 առղ.**

[ԱՅՍ ՀԱՆԳԻՍԴ ՈՀ/ԻԱՆ ՊԱՐՈՒԻ. ՈՎ ԿԱՐԴԱՑ]/Ք ՄԵՂԱՑ ԹՈՂՈՒԹԻՒՆ / ԽՆԴՐԵՑՔ ՃՆՈՑԱ / ԱՄԷՆ:

Ծանոթ. Հո. Զանիոլադյանի կարծիքով ՈՀԻԱՆ կարելի է ընթերցել նաև ՈՒՀԱՆ, իսկ ՆՈՅԱ վերականգնված րառի փոխարեն ԹԱԱՏՈՒՇՈՅ:

Հրատ. Հո. Զանիոլադյան, 219:

### ԿԱԶԱՆ (ՂԱԶԱՆ)

Նկատելի գաղթօջախներից է եղել նաև Կաղան քաղաքը, որաեղի հայերն ունեցել են իրենց եկեղեցին<sup>3</sup> և հոգեոր հովիվը: Նրանք այսաել ղանգվածարար հասաավեցին 1431 թվականից հետո, երբ մուկովյան իշխան Պյատրիի ղորքերը կործանեցին Մեծ Բուղար քաղաքը<sup>4</sup>, և հայկական թաղամասը գագարեց գոյություն ունենալուց<sup>5</sup>:

Վկայություն է պահպանվել այն մասին, որ Կաղանի հայ աղքարնակչությունը օգնել է իվան ԱՀԵՂԻՆ՝ 1552 թ. համանուն խանությունը նվաճելու ժամանակ<sup>6</sup>: Քաղաքի Սուկոննայա արվածանի աարածքում՝ այժմյան Կալինինի փոգոցի վրա եղել են հայկական երկու փողոցներ՝ "Ближняя Армянская" և "Дальняя Армянская": Հայոց գերեզմանաաունը գանվելիս է եղել «З-րդ լեռան» լանջին:

19-րդ դարի վերջին Բարառոյի կալվածքում հայանարերվել են հայագիր աապանա-

1 Н. Березин, Булгары на Волге, с. 64-66.

2 С. Высоцкий, Новая археологическая находка в селе Болгарах. "Известия общества археологов Казанского университета" (ИОАКУ), т. VII, с. 7-8.

3 Հո. Զանիոլադյան, Աշվ. աշխ., էջ 221:

4 А. П. Смирнов, Армянская колония..., с. 330-359.

5 Լ. Խաչիկյան, Հայերը Հին Մուկապյում, էջ 13:

6 Նույլ անդում,

Քաղաքական գույքում ուսումնասիրել և հրաարակել է Բ. Վ. Միլերը<sup>1</sup>:  
 Կազան քաղաքում այժմ պահպանվել է Հայերեն արձանագրությամբ ընդամենը մեկ հուշակոթող, որը գտնվում է Վ. Ի. Ռույանով-Լենինի անվան պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի երկրորդ հարկ տանող աստիճանների հարթակի վրա: Կոթողը համալսարան է տեղափոխվել 1915 թ. Կազանի հնագետների և ազգագրագետների ընկերության ջանքերով<sup>2</sup>:

Կանգնեցված է ուղղահայաց դիրքով՝ մահուգեղ պաստառապատ պատվանգանի վրա: Դա մեակառուր հարթեցրած ժայռարեկոր է՝ կրաքարից (երկ. 2 մ 0,5 սմ, լայն. 95 սմ, քարի հաստությունը՝ 35,5 սմ, արձանագրության տառերի ստեղների միջև եղած բացվածքը՝ 3,5 սմ):

**Մեղ է հասել բավականին եղծված վիճակում:**

Առաջին անդամ այս արձանագրությունը Պետրոս 1-ին կայսեր ցանկությամբ վերծանել և ուսւերեն է թարգմանել Հայադրի կապիտան Իվան Վասիլեր, որը ընթեցել է հետեւյալ կերպ:

**429.**

«ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ ՏՍ.ՊԱՆՍ / ԱԾԱՑՍԻՐԻՆ ԵՒ ՈՂՈՐՄԱԾԻՆ ԹԱՐՈՒԹԻՆ ՑԱՐՈՒ ՓՈԽԵՐԻՆ, ՈՐՔ ԳԱՐԴԱՔ ՄԵՂԱ.8Ս ԹՈՂՈՒԹԻՒՆ ԴԻՏԵՑԵՔ. Ի ԹՎՆ ԶԶՂ ՈՒՄՆ ԳՐԱ.Ծ Է»<sup>3</sup>:

**Հո. Զանփոլաղյանը վերծանել է.**

ԱԼՍՈՒԱ.ԽՍԱՍԻՐԻՆ ԵՒ ՈՂՈՐՄԱԾԻՆ ՊԱ.ՐՈՒ ԱԻԹԻՆ ՈՐԴ/ՈՑ ՊԱ.ՐՈՒ ԹԵՍԵՐԻՆ. ՈՐՔ ԿԱՐԴ/Ա.ՑՔ ՄԵՂԱ.8 ԹՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵՑԵՔ./ ԹՎ. ԷՃԶԴ /1335/:

Մանոք. Հո. Զանփոլաղյանի վերծանության մեջ Հարցականով է արված ԱԻԹԻՆ րառը: Նկատենք, որ ՈՂՈՐՄԱԾԻՆ-ից մինչեւ Թիւ-ը՝ 27 սմ. եղծված է: Եթե ընդունենք, որ տառաստեղների միջև եղած բացվածքը 3-3,5 սմ է. Կարելի է վերականգնել 12-14 ատո. Հետեւարար կատանանք ՈՂՈՐՄԱԾԻՆ ՊՐՆ ՑԱՐՈՒթ:

Ին, ՈՐԴՈ... կապակցությունը: Բնագրում որոշակիորեն ընթեցվում է ԶԶԴ և ոչ թե ԷՃԶԴ, ինչպես առաջարկում է Հո. Զանփոլաղյանը<sup>4</sup>: Նկատենք, որ Հո. Զանփոլաղյանի և Մ. Բրուսեի<sup>5</sup> վերծանությունները նույնական են: Տարրերությունն այն է. որ Մ. Բրուսեն թվականը կարդում է ԶԶԴ, իսկ Հո. Զանփոլաղյանը, ինչպես նշեցինք, էՃԶԴ: Ան-Մարտենը ԱԻԹԻՆ-ի փոխարեն կարգացել է ՑԱՐՈՒԹԻՒՆ, ընդ սմին գանելով, որ պատճենահանումը կատարված է Հայերենին անտեղյակ Ֆրենի կողմից<sup>6</sup>: Նա նույնպես առաջարկում է թվականը վերծանել ԶԶԴ (1335) և ոչ ԶԶԴ (1533), ինչպես կարծում է. Ա. Մ. Շպիլեսկին՝ ձեռքի տակ ունենալով իվ. Վասիլերի վերծանությունը, որը թարգմանել է. «СЕЙ КАМЕНЬ ПОЛОЖЕНЬ НАД УМЕРШИМИ АРМЕНЫ-БОГОУГОДНОМ АРТЕМЬЕМ И КИПРИАНЪ. И КТО СТАНЕТЬ ТОЕ ПОДПИСЬ ЧИТАТЬ, ЧТОЕВЬ ОМЪ ПОМИНАТЬ. 984»<sup>7</sup>

Անգիտացի վաճառական Քրիստոֆեր Բուրոն 1579 թ. իր հորեղբորք հասցեագրած նամակում վկայում է, թե Հայագիր տապանաքարեր է աեսել Ուկեկ կամ Ուվեկ քաղաքի մոտ .

1 Б. В. Миллер, об армянских надписях в Болгарах и Казани, с. 76, 77, 78.

2 Հո. Զանփոլաղյան, Աշխ. աշխ., էջ 212:

3 Տե՛ս ԱՐԱ Ֆ. + 192, ցուցակ № 1, Կազմակի նամակ, № 4/4:

4 Հո. Զանփոլաղյան, Աշխ. աշխ., էջ 214:

5 Des quelques inscriptions arméniennes remarquées au point de vue chronologique par M. Brosset, 1862. Տե՛ս նաև Մ. Броссе. Об армянских надписях в Болгарах. "Известия Имп. археологич. общества, т. II, СПб, 1861, էջ 182: Հմատ. С. М. Шпилевский, էջ 253:

6 Notes les inscriptions arméniennes de Bolghari - "Bullietin scientifique de l'Academie, S. Ptsrb., III, 1838.

7 С. М. Шпилевский, Աշխ. աշխ., էջ 249:

(արգի Սարատովի մերձակայքում): «Այս վայրում, — գրում է նա, — կան ... որոշ թվով գերեղմաններ, որոնց մեջ թվում է թե աղնվական մարդիկ են թաղված, որովհետև գերեղմանաքարերի վրա տեսնվում է ձիռ պատկեր, որի վրա նսանել է մի մարդ՝ աղեղը ձեռքին և մեջքին նետի գոտիի: Գերեղմաններից մեկի վրա վահանի մի կտոր կար, որի վրա տառեր էին փորված, որոնց մի մասը եղծված էր և մնացյալը գարճել էր պակասավոր, բայց մնացորդի ձեռից դատելով՝ հայկական տառեր էին»<sup>1</sup>:

Յակոբ. այդ արձանադրությունները մեկ չեն հասել:

Հայերեն վիմագրություններ են գտնվել Կամա գետի վրա գանվող այժմյան Կրասնայա Պոլյանա գյուղում<sup>2</sup>:

## Ա.ՍՏՐԱ.ԽԱՆ

(ՆԱԽԿԻՆՈՒՄԾ ԻԹԻԼ. ՀԱԶԻ ԹԱՐԽԱՆ, ՀԱՇԴԱՐԽԱՆ)

Վերն արգեն նշել ենք, որ Սարայ-Բերքեյի կործանումից հետո հայ աղդարնակչության ղգալի մի հատվածը աեղափոխվեց խագարական իթիլ քաղաքի տեսքում կառուցված Աստրախան քաղաքը, որաեղ ապրում էին թաթարներ, պարսիկներ, հրեաներ և այլ աղղերի ներկայացուցիչներ: 1556 թ. քաղաքը գրավվեց իվան Սհեղի կողմից և անցավ ռուսական իշխանությանը: 1625 թ. այսաեղ արգեն ձեավորվել էր հայոց ստվար գաղթօչախը: Պետրոս I առեարին ու արհեստագործությանը զարկ տալու նպատակով մի շարք արագոնություններ շնորհեց աստրախանարնակ հայերին. առաջ եկավ հայ խոշոր առեարական րուրֆուապիան, որի ձեռքին էր գանվում մետաքսի, բամբակի արդյունահանության լայն ասպարեզը: Զուլհակագործության 90 առկուր պատկանում էր հայ ձեռնարկատերերին<sup>3</sup>: 1746 թվականից այսաեղ գործում էր Հայկական գատարանը (ռաահառուկ), որը ղեկավարվում էր սեփական օրենսդրով:

19-րդ դարի սկզբից Աստրախանը ունեցել է առանձին եպիսկոպոսական թեմ, ընդ որում չորս եկեղեցիներ — Ս. Ստվածածին, Ս. Պողոս-Պետրոս, Ս. Գրիգոր և Ս. Կատարինե:

1795 թ. ռուսահայոց հոգեոր առաջնորդ Հոգսեփ արքեպիսկոպոս Արղությանը այսաեղ հիմնագրում է հայկական տագարան: 19-րդ դարի սկզբներին բացվում են մի շարք հայկական դպրոցներ, որոնցից հիշատակելի են՝ Սղարարյան դպրոցը (1810 թ.), Աստրախանի հոգեոր ուսումնարանը (1817 թ.), որտեղ ուսուցիչներ են եղել Գ. Պատկանյանը և Գ. Խուլյանը: Ապա սկսում են գործել Հայոց թեմական դպրոցը (1838 թ.), Հայկական ծխական (1851), Հայոց իդական (1870 թ.) և այլ դպրոցներ<sup>4</sup>:

Այժմ Աստրախանի տարածքում հայկական հուշարձաններ չեն պահպանվել, ոչնչացված է հայկական գերեղմանոցը, հետեւարար, ներկա պրակում վիմական արձանագրություններ չկան: Սակայն այդ գաղթօջախի մասին փոքր-ինչ դադափար կազմելու նպատակով մեջրերում ենք ՀՀ Պատմության պետական թանգարանում այժմ պահպանվող մի շարք ցուցանմուշների մակագրությունները, որոնք գիտական շրջանառության մեջ է գրել հիշյալ թանգարանի

1 Տես Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, Բ. Ա. Երևան, 1932, էջ 436-437: Հմմտ. Լ. Խաչիկյան, Հայերը Հին Մոսկվայում, էջ 12:

2 Հո. Զանփոլալյան, Աշվ. աշխ., էջ 219:

3 Վ. Խաչատրյան, Աստրախան, ՀՍՀ, հ. Ա. Երևան, 1974, էջ 593:

4 Տես «Արարատ» 1869, Օգոստոս, № 4, էջ 82, 1869, մայիս, № 1, էջ 21, 1870, հունիս, № 3, էջ 105-106 և այլն: